Հայերենում խիստ առաս են սկզբնածեփ համեմատ հնչյունական տարրերակները ունեցող տեղանունները: Այս երևույթի պատճառ են լինում բարբառների ազդեցույթներ, արևելահայերեն-արևմտահայերեն հնչյունական տարրերությունները, գրչագրական տարրերակները, որք հաճախ նոյնպէս հանգեցնում է նախաձեփ տարրերվող տեղանվան ի հայտ զալում:

Հնչյունական տարրերակները մի շարք դեպքերում չեն հանգեցրել ինքնուրույն տեղանվան առաջացմանը, օրինակ՝ Երասխ/Արարս/Արազ/Արաբես, Կորեր/Կոտոր/ Քերոր, Երզնիս/Արզանշան/Արզնիկ/ Եզրնիս/ Երջինա և այլն, բաղադրյալ՝ Թեղուս/ Դեղուս/ Շեղուս/ Թիգուս տարրերակները: Նշված տարրերակները միևնույն օրյեկտն են անվանում:

Իսկ հաճախ հնչյունական տարրերակները մինյանցից անկախ բնակավայրեր և այլ օրյեկտներ են անվանել, օրինակ՝ Առինջ/ Առիճ/ Առինճ/Հասիճ/Արինջ/Արուճ/ Արենջ, Արարս (գետ) /Երասխ (Երկարության կայարան և ավան ՀՀ-ում) /Արազ (գյուղ Վանի նախանձում), Դարբազ/Դարպաս/Դարբաս, Դեղ/ Դեխ/ Դեհ (գուց նաև Տեղ > դեղ), Դիս (>դից) /Դյուց, Սորբ/Սոր/Զոր/ Ծավդեր (հին զավառանուն), Առնավուս / Էռնառուս և այլն: Բաղադրյալ կազմությամբ՝ Եղեգի/Եղիգի, Երերույր/ Երերուր, Էրիշաս / Երիշաս, Ավանիկ / Ավինիկ և այլն:

Տեղանունների նման հնչյունափոխումների մեջ նաև, բարբառներից կամ խոսկացական լեզվից բացի, կատարվել են այլ լեզուների (Խոնարեն, ատքերեն, պարսկերեն, արաբերեն) միջամտարյանք: Հայոց տեղանուններում հատկապես մեծ է բորբերենի ազդեցույթնը: Ըստ Հրաչյա Անայանի՝ «Ծորրերը, տիրեկով Հայաստանին, չփոխեցին Ակն, Վան, Զմշկածագ, Երզնիս, Բարեր, Կունայի, Կարս, Զազանձոր և այլ անունները, այլ բորբերենի ծայնական օբյեկների համաձայն դարձրին Էզին, Վան, Չիմիչգեզեր, Էրզնիշան, Բայրութ, Գյումրի, Կարս, Զանգեզուր և այլն» (Հրաչյա Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս I, Երևան, 1940, էջ 188): Նոյնպես և ուսերենում Շուշ, Էշմիտզդին, Էրիվան և այլն:

Տեղանունների «բորբացման» այս երևույթը տարածված էր դեռևս միջին հսկայերենից: Նախնական դիտարկումների վրա եենվելով՝ կարելի է նշել, որ հայոց տեղանունների (ոչ միայն արմատական) բորբացման երեք կեննական դեպքեր կեն լինում:

1) Հնչյունական. Արագած-Արազյազ, Դարբանակ-Դարա, Ողջի-Օղջողի, Բող (բերդ) - Բուղակալս, Կող - Գյոլե, Կապաղակ - Կարպաս և այլն:

2) Խմաստային. Ազնվածոր - Գյողալպարա, Շաղկուս-Գյոլիշա, Արեգունի-Գյունեյ, Պաղադրյուր - Սովորուլս, Դարբնիկ-Դեմուրի, Եներմակավան- Աղրիխս, Կարմիր փորակ-Ղըզը գյաղուկ, Վարդանարզ (գետ)-Ղըրխ բուրսղ չայ, Զարագյուղ - Դարաքենդ (Տերերենտ) և այլն:

3) Խմաստային-հնչյունական. Աղբերդ-Աղբուրսդ, Զարեհավան-Զարաֆիխսան, Կոր Զոր (գետ) - Ջյու սու, Քաղբերդ - Աղքաշ և այլն:

Այս օրինաչափությունների վերևանմը հնարավորություն է տալիս պարզել հայերեն-բորբերեն լեզվական մի շարք առնություններ, դրանց միջոցով՝ հայ ժողովրդի պատմության այս շրջանին վերաբերող իրողություններ:

## ԶԻՈՒ ԿԵՐՊԱՐՔ «ՔՅՈՌ-ՕԳԼԻ» ԷՊՈՍՈՒՄ

«Ջյուողի» քյորքական էպոսը ուշ միջնադարի (XVII դ.) ստեղծագործություն լինելով հանդերձ՝ իր զանազան ազգային տարրերակներում պարփակվում է բազմարիվ արխակի շերտեր, առասպելարանական հնագույն տարրեր: Դրանցից առավել ցայտուն է արտահայտված ձիու պաշտամունքը:

Ձիու պաշտամունքին առնչվող տարրերը որպես իմք լինում են դեռևս Ժ. Դյումեզիմ է նշել տարրեր վիպական տաեղծագործությունների համանանությունների առկայությունը (ընդհատ նաև Հերոդոտոսի կտրմից ավանդված սկզբական առասպելների միջև): Էպոսի բոլոր տարրերակներում առկա Ջյուողը ձիու (Ղըուար) կերպարը առասպելական բնորոշ գործակորում է ստացել՝ կախված տեղական միջավայրում արդեն իսկ ճաւապրկան վիպական ավանդությունից:

Արևելյան (միջնասիական) տարրերակներում առանձնահատուկ տեղ են գրադեգուս ձիու տուտեմական պաշտամունքի վերապրուկները: Ձիու կերպարը սերութեան միահյուսված է ձիերի մասին ստեղծված «ասայի աղլողոր» (իմաստուն ձի), «քրովիար», «քափար» նախմական ավանդագործույններին:

Ստացել են տարրերքական են պատմական միջուկը պահպանած արևամյան խմբի տարրերակներում (քորքական, աղղոթանական, հայկական և այլն) առկա առասպելական տարրերը: Ջյուողը մարտածին ունի ջրային (ծովային) ծագում, օժտված է իրաշը հատկություններով, քանի ու ունի բանականություն, օգնում է տիրոջ հարձակման և պաշտպանության ժամանակ, հսկում նրա դյուցազնական բունը, զգում քշնանու մուտենալը և այլն:

Թյուրքական տարրերակներում ձիու ենտ կապված բազմարիկ դրվագներ առնչվում են օղուզական հերթական էպոսին: Հայկական տարրերակներում իրենց հերթին առկա են մի շարք համանանություններ՝ կապված, մասնավորապես, «Սասնա ծուեր» էպոսի և այլ բանակյուսական տաեղծագործությունների հետ: Վերը նշվածն առավել ցայտուն է արտացոլված Վաճի և Մնկսի բարբառներով գրառված տարրերակներով: Ընդամենը, իրեղեն ձիերի և նատակների գորգավորումից ծնված իրաշը ձիերի մասին հերթական հավատարիքը հայերի շրջանում հայտնի է եղել դեռևս Եզնիկ Կողբացու (Վ.դ.) ժամանակներից:

Հստ երեւոյին Ջյուողը նժոյյի Ղըուար («զորշ ձի») անոնք տարածված է եղել հայերի շրջանում XVII դ., ինչ մասին վկայում է Զարքարիա Զանարեցին: Սույն փաստն ինքնին խոսում է նշված ժամանակաշրջանում հենց Ջյուողը ասքերի արդեն իսկ տարածված և ճաւապրկան լինելու օգտին:

## ԱՍՏԱԳՅԱՆ ՋՐԻՍՏԻՆԵ (ԵՊ)

**ԱՐԱԲԱԿԱՆ ՓՈԽԱՇԽԱ-ԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՈՒՐՈՒ-ՔԵՐԱՎԵՐ, ԾԻՐԱԿԻ ԵՎ. ԼՈՌՎԱ ՀԵՐԱՄՑԵՐՈՒՄ**

Հայերնը սկիզբ առնելով հնդեվրոպական իմք լեզվից և անցնելով զարգացման երկար ճանապարհ՝ գերծ չի մնացել օտար ազդեցություններից ու տարրեր ժամանակներում զանազան լեզուներից բազմաթանակ բառեր է փոխասել, որոնք և նրա բառապաշտի մի սովոր մասն են կազմում:

Զգալի է եղել նաև արարերենի ազդեցությունը հայերենի վրա: Չոնենալով VII-X դդ-ում ստեղծված և արձանագրված ժողովրդական պրեէ ստեղծագործություն, չենք կարող ասել, թե արարերենը որքանու է ազդել այդ շրջանի խոսակցական հայերենի վրա: Սակայն ակնհայս է, որ զիտական աշխատություններում (բժշկա-զիտական) դրանց թիվը հսկանում է հարյուրմերի:

ՍԵՐ ԾԱՎՈՏԱԿԻ Է ՉՈՒՅ ՄԱՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻ ԽԱՅԵՐԵՆ ԽՈՍԱԿՑԱԿԱՆ ԼԵԳՎԻ ՔԱՐՔԱԴԱՆԵՐՄ ԷԿԱԾ ԱՐԱՔԵՐԵՆ ՔԱՆԵՐԻ ՄԵԴԻ Ո ՔԱՑԱԿԻ, ԳՈՐԾԱԴՄԱՆ ՊՐԵՏԱՆԵՐԸ, ԿՐԱԾ ԽԱՆԱՊԱՅԻՆ, ԽՆՀՅՈՒՆԱԿԱՆ, ՔԱԿԱԿԱՋՄԱԿԱՆ և ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՎԻՊԻՃ-ԽԱՎԵՐՄՆԵՐԲ:

Այս թեմային մահերամասն անդրադարձել է Աճառյանն իր «Հայոց լեզվի պատմություն» աշխատության մեջ: Մենք զանացել ենք ավելի հսկամանալից քննության առնել հայերենում առկա արարերեն բառերը և նրանց կրած զանազան փոփոխությունները, որոնք չեն եղել Աճառյանի ուսումնամիտուրյան բուն նպատակը:

Հայերենի շորջ 60 բարբառներուն է, անշուշա, առկա է արաբերենի ազգեցրյանը, սակայն ներք տառմասափել ենք միայն Տորոբերանի, Ծիրակի և Լոռվա հերիխարները, որոնք ասացողները պատճել են հարազատ բարբառներուն:

Նշենք, որ գտել և դրս ենք զբել հայկական ժողովրդական եկեղեցներից շուրջ 300 արարելեն քառ, որոնցից ընդամենը 32-ն են ճշգած Աճատյանի թերած ցանկում: Պետք է ենթադրել, որ մնացած քառերը հայերենին են անցել միջնորդ լեզուներից՝ բոլոր հայութեանից և պարսկենից, քանզի լինելով «Պորաճ» և մահմեդական աշխարհի մշակույթի ինքու՝ արարելենին առաստարժութիւն առըստուր է եղել հայկակից լեզուների համար:

*ԱԿԱԿՅԱՆ ԼՈՒՄԵ, ԱՅԱՐՅԱ ՇԵՐՍՆԵՐ (ԵԶ)*

ԺԱՄԱՆԱԿԱԿՑԵՅԻ ԹՈՒԹԵՐԵՐԵԼԻ ԳԵՐԲԱՎԵՆԵՐԻ ԵՎ ԵՐԱՅԵՅ ԳԱՍՏՎԱՆԳՄԱՆ  
ՄԻ ՔԱՅԻ ԱՌԱՋԵԶՆԱԿԱՏՎՈՒՅՑԻ ՅՈՒՆԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Թուրքերենում դերբայներն իրենց կազմությամբ, ձևախնասապային ու շաբակյուսական դրսառումներով բազմազան են և նախապատրիքան մեջ համելու են գալիս խորհմաստային տարրեր փոխանցումներով: Թուրքերենի դերբայների ընտրյամբ համելու են եկեղեցական դերբայները (Nurettin Koç, Tahir Nejat Gencan, Muhammet Ergin), այնպէս էլ խարիդային (Կոմոննով, Այլարու և ուրիշներ):
  2. Հայ ուսանողին բորբերնի դերբայների ուսուցումը պարագանելու համար անհրաժեշտ է վերլուծություններու ու բացարարությունները տալ հայերենի դերբայների կամ այլ համապատասխան ձևեր համեմատական քննությամբ, որի համար իմք են ծառայում Գ.Զահորյանի, Ա. Արքահանյանի, Է. Ալյաշանի և այլոց աշխատություններում տեղ գտած ասմանամենակը ու մեկնությունները:
  3. Ժամանակակից բորբերենում դերբայները տարրերակվում են երեք համր' 1) անորոշ (Eylemlilikler կամ Ad-Eylem), 2) ածական դերբայներ (Ortaçlar կամ Sıfat-Eylem), 3) մակրայական դերբայներ (Ulaçlar կամ Bağ - Eylem):

Անորոշ դերայաները, որմաք տնեն բայանվանական գործառույթ, կազմված են -mak, -mek, -ma, -me, -maklik, -meklik, -ls, -iš, -us, -iš վերջածանցներով:

4. Ածական դերայիները կատարում են գոյականի լավագույթը: Այս դերայիները արտահայտում են ժամանակի և խնամականությանը:

ա) Ժամանակի խմաստ արտահայտող դերբայները կազմվում են՝ բայց արդարացնելով սահմանական եղանակի ընդարձակ (ներկա կամ ներկա ապառն) ժամանակի *Igeniş zaman/-r* (-ar, -er, -ir, -ur, -ur), ապառնի ժամանակի *Gelecek zaman/-acak, -ecek*, փաղակատար ժամանակի *Belirsiz geçmiş zaman/-mis, -mis, -mis*, եղանակի ներկաները և *-ast, -esi, -ca, ce, -dik, -dik, -duk, -duk/-tuk, -tik, tuk, tuk/* դերբայներա ածանցները: Ածականական դերբայները, որոնք առկա են հայոց լեզվամ, ներծնենում են հայերենի ենթակայական և հարակատար դերբայներին, ինչպես՝ *olur şey - լինող բան, լինելող բան, gitler yitz - մասացող դեմք, gelecek yil - եկող տարի, solmuş çicek - բառամած ծաղիկ և այլն:*

բ) Վիճակի խմաստ արտահայտող դերբայները կազմվում են *-an, -en, և -maz, -mez* ածանցներով, օրինակ՝ *çukmaz sokak-փակողի, kirmamaz cam-չկարվաղ ապակի, bitmez der - անվերջ (հավերժական) վիշտ և այլն:*

5. Առանձին ենտարրբարյուն են ներկայացնում բայի լրացումների (խնդիրներ և պարագաներ) գործառություն կատարող մակրայական դերբայները: Թուրքերներ ունի հարուստ մակրայական դերբայների համակարգ, որոնք հանդես են զային ձեմաստային և շարահյուսական բազմազան ներծնակալունով: Այստեղից էլ դրանց յուրացումը առանձնակի դժվարություն կարող է հարցել հայ ուսանողին: Համաձայն ժամանակակից բոլոր քերականազեն Նորեթքին Ըսլի կազմած այլուակի՝ մակրայական դերբայների թվից հասնում է 32-ի, որոնք ներկայացված են իրենց համապատասխան դերբայնակերպ, հոլովական ածանցներով և կապական բառերով:

Դերբայների տարրումը հայ ուսանողին մատչելի դարձնելու նպատակով՝ սրվում են նաև հայերենում առկա դրանց համապատասխան համարժեքներն ու ձեռքը: Մակրայական դերբայները իրենց ինաստաշրայխուական գործառություն նոյնանում են հայերենի անորոշ (հորվիված՝ սեռական, տրական, գործիական), ինչպես նաև համբնբացական (ելիս, ալիս) դերբայներին, ինչպես՝ *yarakar - անելիս // yartica - անելիս, yartigci zaman - անելող ժամանակ, yartigci halde - անելող դեպքում, yarmadan - աներում պես, yarçır - անելով և այլն:*

5.1. Միաժամանակ մակրայական դերբայները ժամանակակից բարբերենում ունեն երկու կարելոր նշանակություն.

ա) *օգտագործվում են բարդ ստորադասական նախադասություն կազմելու համար.*

բ) *ոնենալով պարագայական գործառություն՝ արտահայտում են ստորագյալի եղերություն, ձև, տեղ և ժամանակ:*

6. Այս գեկուցման մեջ ներկայացված դերբայական և մակրայական ձևերն ընտրված են առավելապես ժամանակակից բորբական գեղարվեստական արձակից (Յաշար Քեմալ, Ազիս Ներսին, Ֆարիդ Բայրութ, Սամիմ Քոջայով և ուրիշներ):

## ԱՐԳԱԿՈՒՆ ՊԵՏԱԿ (Ճ)

### ՏՐԴԱԾ Ի ԱՐԾԱԿՈՒՆՈՒ ՀԵՏ ԿԱՂՎԱԾ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ԸՆԻՌՁ

Պատմագիտության մեջ Տրդաս Լի վերաբերյալ առկա են բազմարիվ ինդիքներ: Սույն աշխատանքում բննարկվելիք հարցերը հետևյան են. ա) արդյո՞ք հայ

Տրդատ Ի-ի զահակարս ժամանակահաստվածի վերաբերյալ զանում ենք, որ արքան Արտաշես Ռ-ին նոյնանալով, իշխել է 41 տարի՝ 66-107թթ. ընթացքում: Ցափոր, 77-ից և Աշխատարի զահակալումը հունա-հռոմեական աղբյուրները լրում են և այս պարագայում անփոխարինելի են Խորենացու վկայությունները, որոնք, սակայն, անուշադրության են նաևնին:

Աղբյուրները և միջազգային հարաբերությունների զարգացմանը ցուցանում են, որ 91(96)-107թթ. ընթացքում հայ-պարքեական զորքերը արշավել են Եղեսիա, վերաբերել Օսրոյենեի բազավորությունը, կազմակերպել հակառածնեական հզոր դաշինը՝ նաև հետավոր Դավիթի, Ապառած Արարայի երկու բրկու բազավորությունների: Նսարատեական Պետրայի և երեական Կեսարի-Պանելիաի ընդգրկումով:

Տրայանուր, ի պատասխան այդ դաշինը, 106ր. կայսրության է կցում Դավիթ և 106-107թթ., արշավերով Արեւել, Ապառած Արարայն վերածում է արովինցիայի, իսկ Պաղեսամինի հյուսիս-արևելյան շրջանները միացնում Ասորիին: Օքավաստրվելով դրանով, Տրայանուր անցնում է Եփրատը, վերականգնում Օսրոյենեի բազավորությունը: Հայոց գործերը, Արտաշես-Տրդատի զիսավորությամբ, ընդունելով կայսեր գերիշանանությունը, Վերադառնում են Հայաստան: Ահա այդ ժամանակ է Տրդատ արքան, 76-81 տարեկան հասակում, պետք է որ վախճանված լինի:

### ԱՍՏԱՐՅԱՆ ՈՒԵՔՄԱՆԴՐ, ՄԵՐԱԲՅԱՆ ՈՋԻՇԵՆ (ՇԴՀ)

#### ԱՂՋԹԹԻ ԵՎ ԶԻՔՔԻ ՓՈԽՎԱՎԱԿԱՎԾՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՆԻՆ՝ ԻԲԵՆ ԱՐԱՅԻՒ «ՏՈՒՄՈՒՄ-ԱԼ-ՀԻՔԱՄ»-ՈՒՄ

1. Սուֆիական զրականության պատմության ուսումնափրության համար բացառիկ արժեք ունի մեծ շեյս Մուհամմեդին Իրեն Արարիի (1165-1240) (بن عربي الشيخ) (الراوي محيي الدين) «Ֆուսուս-ալ-Հիքամ» («Խնամատության զենարարելը») երկը, որի արաբերեն թենական հրատարակությունը լրայ է տեսել Կահիրելում ու Բեյրութում՝ աշխատափրությամբ փիլ. դրկուոր Արու-ալ-Ալա Աֆիֆիի (ابي العلاء عفيفي) (Քեմբրիջի համալսարան):

2. Զիքքի և աղորքի (ձևակ-ձեր) բազմաբարդ փոխկապակցվածության, ինչպես նաև սուֆիական զարդարաբախտության ու դրամախիկ-ուղղափառ խալամի «ասդապտացման գործընթացի» իմանակարգերի թենականությունից կարևորվում է մասնավորապես միստիկական աստվածաբնության վերոհիշյալ կորողի՝ սոսորք թնագրից բարզմանարար ներկայացվող հատվածը, որտեղ Իրեն Արարին հանդես է եկել Դուրանի սուրարը կարդալու անհրաժեշտության որույն շատագմությամբ: Հատվածի պատմաբանափրական վերլուծության համեստ փորձ է ներկայացվող գեկոցումը:

3. (Բնագիրը) Աղորքը ինձ համար դարձավ աչքի լրայ, քանզի այն վկայություն է (ու տեսիր (ձահամա)), այսպես է, քանզի այն զարտնի գրուց է Ալլահի ու նրա ստրուկի միջև. ինչպես ասել է «Հիշեր Ինձ, և Ես կիշեմ ձեզ»: Եվ այն (աղորքը) երկրպագություն (պաշտամունք (ձաւաց)) է, որը երկու կեսով բաժանված է Ալլահի ու Նրա ստրուկի միջև: Նրա (աղորքը) կեար Ալլահին է, կեսը՝ ստրուկին, ինչպես ասված է ճշմարիխ բարում, քեզ Բարձրայալ Ալլահը ասել է. «Բաժանեցի աղորքը երկու մասի Իմ և Իմ ստրուկի միջև. (աղորքը) կեար Իմն է, և կեսը Իմ ստրուկին, և Իմ ստրուկին (կորիք) այն, ինչ խնդրենք»: Ասում է ստրուկը. «Հանուն բարեգործ-բարեսիրտ Ալլահի...»: Ալլահը ասում է. «Իմ

ստրուկը հիշեց ինձ»: Ստրուկը ասում է. «Փառք Ալյահին՝ երկու աշխարհների Աստծուն...»: Ասում է Ալյահը. «Իմ ստրուկը փառաբանեց ինձ»: Ասում է ստրուկը. «Բարեգորիին, Բարեսիրտին (Փառք)»: Ալյահը ասում է. «Իմ ստրուկը բարձրացրեց առ ինձ զոլը»: Ստրուկը ասում է. «Անել դատարանի օրվա Տիրակալին...»: Ալյահը ասում է. «Փառաբանեց – լիազորեց Ինձ Իմ ստրուկը»: Եվ այս կեսը ամբողջությամբ բարձրացած է: Այնուհետև ստրուկը ասում է. «Ջեզ ենք երկրպագում և քեզնից ենք օգնություն հայցում...»: Ալյահը ասում է. «Սա Իմ ու Իմ ստրուկի միջև է... Իմ ստրուկին՝ (Կտրվի) այն, ինչ խնդրեց»... Ստրուկը ասում է. «Տար մեզ ուղիղ ճանապարհով, նրանց ճանապարհով, ում գրացիր, ում վրա չես բարկանում, ով չի գործում մեղք»: Ալյահը ասում է. «Սա՝ Իմ ստրուկին, և Իմ ստրուկին՝ (Կտրվի) այն, ինչ խնդրեց»: Եվ սա (այն կեսը) ստրուկինն է, ինչպես պատճինը՝ Բարձրացածնը: Այստեղից բխում է «Փառք Ալյահին՝ աշխարհների Աստծուն» կարդալու աներածեառությունը, և ով այն չի կարդում, չի կատարում Աստծու և Նրա ստրուկի միջև կիսված աղորքը: Իսկ այն գաղտնի գրույց է, որ (նշանակում է) եիշել (ՀՀ), իսկ ով եիշում է Աստծուն, հայտնվում է Աստծու նու և Աստված՝ (գտնվում է) նրա նու, բանզի ճշմարտությունը Աստվածային լորի մեջ է, բայ որի Բարձրացը ստել է. «Ես ինձ հիշողի ենա եմ»: Իսկ լինեալվ նրա ենա, ում եիշում է, կտեսնի նրան, ով իր ենա է, եթե տեսադրություն ունի. դա վկայություն է ու տեսիլք»:

### ՎՈՐԴՈՒՅՑՈՆ ԳՐԱՌԲ (ԵՎԱՌ)

#### **ՀՐԱԺԱՋԱԼԵՐ՝ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿՐՁՆԱԿԱԾՆ ՆԱՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՍԻՐՈՂ**

1. Հայ մեծանուն լեզվարան Հր.Աճառյանը այն համբավիսակ գլունական-ներից է, որոնց հետաքրքրությունների ծիրա գիտության մեկ բնագավառով չի պարփակվում: Աճառյանի ժամանակությանը ընդգրկում է հայագիտության համար բոլոր ասապարեգները:

Մի ուրույն գիտական ուսումնասիրության հյուր է ենց մեծ գլունականի «Եյանքիս հուշերից» ինքնակենսագրական գիրքը, որից որոնող միուրը կարող է գիտության համար բազմաթիվ արժեքափոք փաստեր բարել: Ծրագայելով Պարսկաստանի մի շաբթ զավաներում ու բաղադրերում (Էնցելի, Ռաշտ, Դագին և այլն), 6 տարի ապրելով Թավրիզում և մեկ տարի՝ Ծննդանուն, Աճառյանը իր զրուն պարսկանայ զաղրաշխարիք և նրա երկերների մասին խիստ ուշագրավ հուշեր ու անելեկություններ է հաղորդում: Դրանք նաև օգտագործել է նաև իր «Հայոց զաղութերի պատմություն» գարդ անախական մեջ:

2. Որտեղ էլ, որ Աճառյանը եղել է կամ ապրել (Թուրքիա, Ֆրանսիա, Ռուսաստան, Վրաստան, Ալբրեխան, Պարսկաստան), ուսումնասիրել է նաև տեղական ժողովրդների հիմատուկացը, սովորությունը, կրթական հավաստալիքները. օրինակ, Ստամբուլում այցելել է մեկնիներին ու Ռուֆայի դերվիշներին, Թավրիզում ծանոքացել է բունարիների աղանդին, Բարվան մասնակցել է բահայիների հավաքներին, այնուհետև՝ 1919թ. Թեհրանում մի ամերիկացի թշնօղով անզերեն բարզմանությամբ կարդացել է Բահայուլլաի «Զիրար-ի-արդաս»-ը, որը բահայիների սրբազն գիրքն է: Փաստորեն, հայ իրականության մեջ, Ասրաւուից հետո Աճառյանը երկրորդն է, որ ուսումնասիրել է բահայիների դավանանքը:

3. Մեր կարծիքով, ինքնին կարևոր է հենց փաստը, որ նոր կրօնը իր բնօրքանում ուսումնասիրել է Աճայշանի նուան մեջ զիտականը, մանափանդ, որ դարսակցքին բահայիների մասին զիտական աշխարհում թիզ բան էր հայտնի: Եթե որպես բամարիների աղանդի առաջին հետազոտող Աճայշանը տպագրել է հայերեն և անգլերեն հոդվածներ, ապա բահայիների մասին իր հսկախած նյութը նաև երկար տարիներ չի հրապարակել: Պատճառների մասին իր կենսագրական գրքում Աճայշանը չի նշում: Հայտնի չէ նաև, թե նա ձանո՞ք էր բարիզմին և բահայիզմին նվիրված Աստրաբետի բավականին հանգամանալից հոդվածներին ու աշխատությանը: Իրենց անձնական ծանորության և հարաբերությունների մասին ևս չի գրում, թեև իր հուշերում նշում է, որ Թավրիզում ապրած տարիներին Աստրաբետը բաղադրի ճանաչված հենչայան գործիչներից էր և ուներ տպարան: Ի դեպ, Աստրաբետը բահայիներին ուսումնասիրել է հենց Թավրիզում:

4. Բահայական կրօնին վերաբերող Աճայշանի ուսումնասիրությունը ամբողջավիմ ինքնուրույն է՝ իրմանված Բարքում և Թեհրանում բահայիներից բաղադրական գլուխական հոդվածով շիրապարակելու մասին առայժմ կարելի է միայն կոսիել, որ ծանոթանարկ Աստրաբետի գրքին, Աճայշանը, որպես մեծ զիտական, նոյն թեմայով իրեն կարող էր բայց տալ համրես զայ միայն այն դեպքում, եթե առավել խորը ու ընդգրկուն աշխատություն գրեր, իսկ դրա համար նաև Թեհրանում ոչ այնքան ժամանակ ուներ, ոչ էլ այդ նյութի լայն հետազոտությունն իր նրա զիտական հիմնական հետաքրքրությունների շրջանակում: Այլ հարց է բահայիների ուսումնասիրության դրվագը որպես իր կենսագրության փաստերից մեկը ներկայացնելը, ինչը և արել է մեծ զիտականը իր «Կանքին հուշերից» գրքում:

5. Անկախ վերը նշված ներքաղաքարյուններից, բահայագիտության համար շատ կարևոր է այն, որ Աճայշանը ևս ուսումնասիրել է այդ կրօնը, կարևոր փաստեր հաղորդել, արել եղանակնարկումներ ոչ միայն կրօնի եաբյան, այլև մեծ տերությունների կողմից բահայիներին հովանափրերու հարցի բաղադրական կողմի վերաբերյալ, շարադրել իր վերաբերմունքը Արևելքում նոր, խաղաղապիտական կրօնի տարածման մասին:

6. Բահայականանության ծագումից անցել է ավելի բան մեկնակես դար, աշխարհի բազմաթիվ երկրներում այսօր արդեն ափոված են տարբեր ազգերի շարք 5 միլիոն բահայիներ: 1992թ. Հայաստանում ևս կազմավորվել է հայ բահայիների փոքր համայնք, որը 1999 թ. տվյալներով արդեն ունի 210 անդամ (Երևանում-52, Գյումրիում-14, Վանաձորում-12, Արևլյանում-8, Արմավիրում-15, Դիլիջանում-10, Ստեփանավանում-9, Սարգսավանում-14, Ապարանում-12, Էջմիածնում-10 և այլն):

7. Եթե վերշարադրյալն ավելացնենք, որ Հ. Աճայշանն է առաջինը հայերեն բարգմանել և դեռևս 1911թ. իրատարակել հնդկական «Քիազավադզմուն», ապա վստահարար կարող ենք արձանագրել, որ նա ոչ միայն նշանափոք լեզվաբան ու հայագետ է, այլև լայն ընդգրինան արևելագետ, որի արևելագիտական ու կրոնագիտական ժառանգության ընդունելը մի բանի դրվագի կարողացմանը անդիսալտանալ ներկայացվող հիմնադրություն:

## ՄՈՒՀԱԾԵԴ ԱԼԻՒ ԳԵՐԸ ԵԳԻՊՏՈՍԻ ՂԱՏՄԱՒԹՅԱՆ ՄԵԶ

XVIII դ. երկրորդ կեաին Օամանյան կայսրության սպառանական իշխանությունը զնարկ բարձրացնում էր: Ակտիվացել էին սպակենտրոն ոտերք: Եվրապական աերությունները, պայքարելով Արևելքի սպառան և հումքի հարուստ շոկաների համար, իրենց զործությունը նայաստում էին այդ գործընթացներին:

Լիներվ օամանյան նախանց՝ 1798թ. Եզիզառար գրավվեց Ֆրանսիացիների կողմից: Վերջիններս չկարողացան իմանափորվել այսուեց, սակայն տեղում ատելություն և քշմանանք սերմանելուց զատ, եղիսաբետներին ծանրացրեցին բաղարակության որոշ առաջադեմ բարեմանությունների: Մեն զարկ ապեց երկրի հասարակական ինքնազիտակցության զարգության գործունեության վերաբերյալ:

Նապոլեոնի հայտնի այդ արշավանքի արդյունքում Եզիզառարուն է հայտնվում Մուհամեդ Ալին: Օժտված լիներվ փայտըն ուղեղով, պարզ մտածողությամբ, ունենալով ուզմական մեծ տաղանդ՝ Մուհամեդ Ալին արագորեն բարձրանում է բորբական զինվորական կազմուների սանդղակով: Խորամանկորեն օգտագործերվ Եզիզառարուն առկա բաղարական ուժերի տարածայնությունները Մուհամեդ Ալին շուտով անցնում է իշխանության զրարկության վրա:

Հնարքեն պայքարելով սպակենտրոն ուժերի մամլութերի դեմ, Մուհամեդ Ալին ամրացնում է կենտրոնական իշխանությանը: Նա իրականացնում է մի շարք կարևոր բարեփոխություններ, որոնք առնչվում էին քենա ու ուզմական, և թե՛ զյուլատնանության սապարեցներին: Մեծ նվաճում էր մենաշնորհաւափրությունների իմանալումն, երբ երկրի գրեթե ամբողջ տնտեսությունը դրվեց պետական վերահսկողության ներքո: Դրանով Մուհամեդ Ալին կատարեց առաջադեմ և շատ կարևոր բայց՝ անհաս զյուլացուն կամ արեւատափորին դուրս չցրտեց շոկայական հարաբերություններից: Ռազմական բնագավառի բարեփոխությունները հնարավորություն տվեցին ստեղծել մոտ 250 հազարանոց ճարտանակ բանակ, որը ապահովեց լայնածավակ նվաճումները: Պատվիրակությունների փոխանակությ մշակույթի ասպարեզն պայմանակրեմ ազգային բարժուական մտավորականության առաջացումը: Այս ամենը նպաստեց ափատատիրական կարգերից նոր, կապիտալիստական հարաբերությունների անցնանքը:

Եզիզառար, ուր զեերվ ժամանակի հետ, բավականին առաջ անցավ արևելյան այլ տերություններից: Բոյքը նախադրյաները առկա էին որպեսզի այն վերածվեր հզոր զերականության և ավելի ակտիվորեն ազդեր համաշխարհային պատմության ընթացքին: Մուհամեդ Ալին ցանկանում էր իր ընտանիքի իշխանության ներքո վերածնել հզոր արարական խալիֆայությունը: Աշխատանքներ տարվեցին արաբների մեջ արքնացներու ազգային ինքնազիտակցությունն ու փառավոր անցյալի հիշողությունը:

Զարգացման աննախադեպ բայլերը հնարավորություն տվեցին Եզիզառարի բափականին ընդարձակել իր տարածքը, իմանականում Օամանյան կայսրության հաշվին, իսկ այսինքն ընդհանրապես հարցականի տակ դնել Քարձը Դուան հետազ գոյությունը:

Եզիզառարի զարգացումն ու հզորացումը վասեգեցին տարածաշրջանում անզիւսկան շահերը: Արյունքում Եզիզառար ունեցավ նոյնան պանականի և ողբայի անկում, ինչպես որ անսպասելի և զարմանալի էր նրա բարձրացումը:

Մուհամեդ Ալիի կառավարման ժամանակաշրջանը Եզիզառարի պատմության ամենափայլուն էջերից է: Եվ երբ այն տապալվեց, երկար ժամանակով իսամեց Եզիզառարի աստղը:

**ՄՈՒԷԱՄՄԱԳԻ ԳԻԾԵՐԱՅԻՆ ՃԱՌԱՎԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԳԻՅԱԲԱՆԱԿԱՅԻ  
ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅԱՆ ՀԱԲՅԻ ՀՈՒՒՔ (ԱՍՏԻՃԱՆԻ ՄԻՖԸ)**

1. Արարագիստուրյան մեջ ամենարիշ ուստմնասիրված թեմաներից մեկը Մուհամմադի զիշերային ճամփորդուրյան մասին լեզենդի խորեղանիշների դիցարանական բացատրուրյունն է:

Լեզենդում կան բազմարիվ տարրեր, որոնք խորեղանշական իմաստ ունեն, ինչպես ուկյա բարդ, Ալ-Բորակը, կարով, զինով, մերու անորները և այն, սակայն այս հաղորդման համար մենք ընտրել ենք դրանցից մեկի՝ աստիճանի միջի վերլուծուրյան խնդիրը:

2. Այս լեզենդը խամական ավանդուրյան մեջ հայտնի է որպես **والمراج  
أولاً سر** զիշերային ճամփորդուրյուն ու երկնային այցելուրյուն և իմանված է ավանդուրյան (հատիսներ, սիրա և այն), ինչպես նաև **Նորանի** որոշ այաբների վրա: Այն պատմում է Մուհամմադ մարզարեի Ալ-Բորակի օգնուրյամբ Երասղեն կատարած ճամփորդուրյան, այստեղ նախարդ մարզարեների հետ համատեղ աղորքի, այնուհետև երկինք կատարած այցելուրյան և Ալլահից սուացած ցուցումների մասին:

3. Խամական ավանդուրյան մեջ կան լեզենդի բազմարիվ տարրերակներ, որոնք զգալիորեն տարրերով են իրարից, ընդ որում ոչ միայն սուսնձին մանրամասներով, այս, երեքն, նաև բուն էլուրյամբ, մասնավորապես, որոշ տարրերակներ իրաւուակում են միայն զիշերային ճամփորդուրյան մասին, մյուսները՝ միայն երկնային այցելուրյան, սակայն, իմանականում, այս երկու իրադարձուրյունները միավորվում են մեկ լեզենդի շրջանակներում:

4. Մեզ եետարրքաղ հաստվածք վերաբերվում է Մուհամմադի՝ երկինք կատարած այցելուրյանը: Ավանդուրյան մեջ երկինք բարձրանալու երկու միջոց է նշվում երկինք տանող աստիճանը և Ալ-Բորակը: Սակայն վերջինս բավականին հազվադեպ է համարվում:

5. Վերին և ներքին աշխարհները առասպելաբանական կարևորագույն հակադրուրյուններից են: Միֆերում, որպես կանոն, տիեզերքը եռաշերտ է, բայց որում, երկիքը զգանվան է այդ ողբահայաց կատուցի կենտրոնում, սոսորին աշխարհը մարմնավորում է դժոխքը, վերինը՝ դրախտը: Այս շերտերը, նոյնպես, կարող են բաժանվել մակարդակների (Դարանում դրանք յոթն են): Կապը այդ բոլոր մակարդակների միջև իրականացվում է տարրեր միջոցներով՝ մինչև երկինք հասնող բոլոր ներեր, աստիճաններ և այն:

Աստիճանի թեման, որպես տիեզերական կապի միջոցի, համելիպար է աշխարհի տարրեր մասերում: Հիմ Աշխարհում այն հայտնի էր երես-թրիստանական, եզիկուտական, բուդդայական, իրանական, շամանական ավանդուրյուններում, այն իր արտացորում է գուել նաև **Նորանում** (6.35, 52.38, 15.18):

6. Աստիճանը հաճախ օգտագործվում է որպես սանդղակ, որի միջոցով նկարագրված է տիեզերքի բազմաշերտ կառուցվածքը: Այն եենց այդպիսի ֆունկցիա է կատարում երկնային այցելուրյան մասին լեզենդում նրա օգնուրյամբ Մուհամմադը ոչ միայն երկինք է բարձրանալու, այլ նաև այցելում է վերջինիս յոր շերտերը:

7. Այս վերլուծուրյան միջոցով փորձ է կատարվում ներկայացնելու **Նորանի** տերսուի դիցարանական բացատրուրյան հեմարագրուրյունը, ինչը բույլ կառ ավելի խորը ընկալել **Նորանի** տերսուը և վերականգնել այն մանրամասները, որոնք դրան մնացել ֆիքսված տերսուից:

**«ԽՍԱՄԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՐՔՈՐՋԱԾՈՒՄԵ  
ՂԱԲԱԲԱԴՅԱՆ ՀԱԿԱՎԱՐՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սլովագային հարաբերություններում խլամական զործոնի ակտիվացումը Հայաստանին պարտադրում է նոր նոտեցումներ: Դարարացյան հարցի միջազգայնացման պայմաններում մեզ համար ոչ բարենպաստ միտումներ և նկատվում խլամական շրջանակներում:

Իսպանիան կոնֆերանը ՄԱԿ-ից հետո ամենաբազմարդ, միջազգային ամենազդեցիկ խլամական կազմակերպություններից է, որն անդրադարձել է դարարացյան հակամարտությանը: Անդամ պետությունների քաղաքական, տնտեսական և մշակութային ինտեգրացման քաղաքականությունը որդեգրված կազմակերպությունը (ԻԿԿ) զործում է 1969թ., որին ներկայում անդամակցում են 55 խլամական երկրներ, ներառյալ Ալբրեժանը: Կազմակերպությունն իր կարևորագույն խնդիրներից մեկը համարում է մասնակցությունը միջազգային այն կոնֆիկումների լուծմանը, որոնցում ընդդիլված են նահմելականները: Կազմակերպության գլխավոր նարմիններն են՝ բարձրագույն օրգանը՝ բազավորների, պետությունների և կառավարությունների ղեկավարների կոնֆերանը, որ գումարվում է պարբերաբար, երեք տարի մեկ անգամ որևէ խլամական երկրում, արտաքին զործերի նախարարների ամենամյա կոնֆերանը, զլատական նարմինը՝ խլամական արդարության դիվանը: Կազմակերպության զործադիր՝ Գլխավոր բարտողարության նախավայր-գրասենյակը Զերդարձում է (Սառույան Արքաթի): ԻԿԿ-ին կից զործում է Զարգացման խլամական բանակը, որը ֆինանսավորում է ԻԿԿ ծրագրերը, խրանում անդամ պետությունների տնտեսական ինստեգրացումը:

Սահմելական համերաշխարյան մկրությի վրա խարսխված կազմակերպությունը դարարացյան հարցի կապակցությամբ բանից հանդես է եկել հայսարարություններով, որոնցում դատավարութել է Ալբրեժանի նկատմամբ Հայաստանի «ազրելի պիտու», կոչ է արել Հայաստանին՝ դրս թերեւու զորքերը «զրավյալ տարածքներից», միևնույն ժամանակ հանձնարերով համապատասխան ատյաններին՝ հյուրական օգնություն ցույց տալու Ալբրեժանի զարդարականներին: Կարարայան հարցը դիտարկելով իրեն հայ-ալբրեժանական հակամարտության, ԻԿԿ-ն վերսիդշալ խնդրին անդրադարձել է Կարաչիի XXI (1993թ. ապրիլ), Զակարպայի XXV (1996թ. դեկտեմբեր), Շուրբիայի արտահերթ V (1992) արտաքին զործերի նախարարների կոնֆերանսներում, Կասարլանկայի VII (1994թ. դեկտեմբեր), Թեհրանի VIII (1997թ. դեկտեմբեր) զարգարաժողովներում: Որոշ ծայրահետ միտումներ են նկատմել Զակարպայի կոնֆերանսում, որ Հայաստանի կամքի Ալբրեժանի «զրավյալ տարածքներում» ազգարանակշորյան դեմ զորդողությունները որակել են իրեն մարդկության դեմ ուղղված ուժիներ, կոչ է արվել ԻԿԿ անդամ և միջազգային հանրության բոլոր երկրներին՝ օգտագործելու ազդու տնտեսական և քաղաքական միջոցներ՝ վերջ տալու «հայկական ազրեախային»:

Ուժերի ներկա հարաբերությունը փոխենով հօգուտ խլամական երկրների, փորձ է արվում ստեղծելու միջազգային հարաբերությունների մի նոր որակ, որն ամրագրված է կրօնական մկրությունով:

ԻԿԿ շրջանակների հետ դիմանագիտական հարաբերությունների ընթացքում հայկական կրղմը բազմից փորձել է պարզաբանումներ տալ Դարարացյան հակամարտության նույթան, խաղաղ լուծում գտնելու Հայաստանի ջանքերի մասին, անքույլատելի է համարել խնդիրը կրօնական տեսանկյունից դիտարկելու միտումները:

Այս է վկայում նաև 1993թ. ապրիլի 22-ին ՀՀ նախագահ Լ.Տեր-Պետրոսյանի ուղերձը ԻԿԿ Գլուխվոր քարտուղար Համիլ աղ Գարիբյան: Իր հերթին ԻԿԿ-ն հայ-ադրբեջանական հակամարտուրյան արդարացի լուծումը տեսնում է ԵԱՀԿ շրջանակ-ներում տարվող խաղաղության գործ լեռացում:

Նշենք, որ Հայաստանը տարածաշրջանուն ծգուուն է խաղաղության, և ԻԿԿ-ի վարած ոչ բարենպաստ քաղաքականությունն Հայաստանի համեմակ չի կարող խս-չընդուտել ներկայում ԻԿԿ անդամ որոշ պետությունների հետ ՀՀ ունեցած միջավետա-կան հարաբերությունների զարգացմանը: Հայ-խամանական հարաբերություններում անհրաժեշտ է խոսափել կրնական լորի վրա որևէ խնդրի շահարկումից: Հայաստանի Հանրապետության արտօքին քաղաքականության շահերը, ըստ ամե-նայնի, պետք է ուղղված լինեն խամանական շրջանակներում հայանպաստ արամադրու-թյուններ ստեղծելու առաջնահերթ խնդրին: Տարածաշրջանի երկրների հետ երկխառո-րյան և փոխընդունման միջոցով միայն Հայաստանը կարող է չեզորացնել իր համար ոչ բարենպաստ միտումները:

ԻԿԿ-ի հետ Հայաստանի հետագա հարաբերություններում անհրաժեշտ է ապահովել ԻԿԿ-ի աշխատանքներին Հայաստանի ներկայացությունը՝ դիտողի կար-գավիճակով:

### ՕՃԱԿԱՆ ՄՈՒՐՈՒ

#### **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԲՆ ԱՇԽԱՏԱԲՀԻ ԳԱՎԱԿԱՐԳՈՒՄ-Մ**

Հին եռնական, հռոմեական, հայկական և այլ աղբյուրներից հայտնի է, որ առաջավորապիտական տարածաշրջանը և նրան հարող շրջանները ընդգրկող աշխար-հեռու գոյություն է ունեցել որոշակի զահային աստիճանակարգ (զահակարգ): Հնագույն ժամանակներից այս աստիճանակարգի առաջին զահը հիմնականում պատկանել է Սուրբեատանին: Մարտական, Աքեմենյան, եետագայուն նաև պարքեական տիբրապետու-թյունների ժամանակաշրջանում կայուն տեղ են ունեցել միայն մարերը, պարտիկները և հայերը, եետագայուն նաև պարքեները: Անկախ այս էքնունների քանակից՝ իմբնա-կանում գոյություն են ունեցել երեք առաջնային զահեր: Մեկսկան զահ պատկանել է մարերին և հայերին, իսկ պարքեներն ու պարտիկները համատեղված տիրել են մեկ զահի:

Գահային աստիճանակարգը պայմանավորված է եղել տվյալ ազգի ու պետության հզորությամբ, նրա ունեցած զորքերի քանակով: Այս աստիճանակարգով է պայմանավորվել նաև հիշյալ պետությունների զորքերի էքնիկ դասավորությունը, ինչպես նաև «արքայից-արքա» տիտղոսի պատկաններությունը:

Չանչի որ մարերը, պարտիկները և պարքեները հաջորդաբար հասել են գերիշխանության, ապա ներադրելի են, որ նշված տարածաշրջանում երեք զերիշխա-նության է հասել նաև Հայաստանը, ինչն էլ ապահովել է նրա հաստատուն տեղը հզորների ենյակում կամ քայլակում: Ներադրելի են, որ հայերը գերիշխանության են հասել մինչև մարերը, ինչը դրում է այլ տեսանկյունով դիտարկել ուրարտական պետության բնույթը:

Գահակարգի հետ կապված պարզաբանումները և ճշգրտումները բավականին հստակ պատկերացում են տալիս հնում Հայաստանի գրաված դիրքի ու ազդեցության մասին: Առկա տվյալներից հետևում է, որ Հայաստանը հանդիսացել է Հին Աշխարհի առաջնային և հզոր պետություններից մեկը, ինչն արտահայտվել է քե՛ նրա

աեղով հզրների գախակարգում, թե՛ նրա ունեցած զբրերի քանակով և թե՛ նրա տիրապեսության ընդգրկած սահմաններով:

### ՀԱՂԱՎՈՒՄՆԵՐ

- ԱԲ - ՀՀ ԳԱՍ Արևելագիտության ինստիտուտ  
ԳԻ - ՀՀ ԳԱՍ Գրակամուրյան ինստիտուտ  
ԳՎՄԻ - Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտ  
ԵՊՀ - Երևանի պետական համալսարան  
ՀԱԻ - ՀՀ ԳԱՍ Համագյուղական և ազգագործյան ինստիտուտ  
ԵՀԱՀ - Երևանի «Հրաշյա Ամառյան» համալսարան  
ՀՄԻ - Հայաստանի մանկավարժական ինստիտուտ  
ՀՅԹԻ - Հայոց ցեղասպանության քանզարան-ինստիտուտ  
ՊԻ - ՀՀ ԳԱՍ Պատմության ինստիտուտ

# Բ Ո Վ Ա Ն Գ Ա Կ Ո Ւ Թ Յ Ա Ւ Ն

<b>ԱՐԵՎԱՄՅԱՅՆ ՆՈՒԽԵ (ԵՊՀ) - 1920-ական թթ. եզիդացի միքալորականի գաղափարական ճշնաժամը Խազիր Մահֆուզի վեց տարբերակները («Կարտուզի ամբողց») վեղում</b>	<b>1</b>
<b>ԱՆՏՈՆՅԱՆ ՅՈՒԼԻԱ (ԵՊՀ) - «Արքի» հասկացությունը հայոց ամանորական մշակույթում և նախարակալության առաստեղաբանությունները.....</b>	<b>2</b>
<b>ԱՐԵՎԱԿՅԱՆ ՄԱՐԵՐ - 1979թ. Իրանական հեղափոխության դրդադարձառների շուրջ.....</b>	<b>3</b>
<b>ԲԱԼՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ԵՊՀ) - Մշակութային շոկը որոշեն անարդյունավետ մողեռնիզացինան հետևանքը.....</b>	<b>4</b>
<b>ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ (ԱԻ) - Թուրքիայի հանրապետական ժողովրդական կուսակցության ձևավորման հարցի շուրջ.....</b>	<b>5</b>
<b>ԲՈՐՈԽՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀԱԻ) - Հարավային Հայաստանի արծաթի անորմերը (Ք.ա. Ա հազ. 1-ին կես).....</b>	<b>6</b>
<b>ԳԱՍՎԱՐՅԱՆ ՄՐԱՄ (ԵՊՀ) - 1978-1979 թթ. Իրանական հեղափոխությունը որոշեն վարածաշրջանում նոր քաղաքական իրադրության ձևավորման գործոն.....</b>	<b>8</b>
<b>ԳԵՂԻՆԻ ԱՐՏԱԿ (ՀԱԻ) - Քաղաքային բնակավայրերը Կուր- արաքսան ժամանակաշրջանում.....</b>	<b>10</b>
<b>ԴԱԼԱՅՅԱՆ ՏՈՐՔ (ԵՊՀ) - Ֆեղային և հասարակ անունների կայի մի քանի դրանորուսներ (Հայկական լեռշխարի և Իրանական սարսահարք).....</b>	<b>11</b>
<b>ԴՐԲՈՅՑԱՆ ԱՍԱՆ (ԱԻ) - Հայաստան քրդական գրության դերը գրական քրդերենի կազմակերպությունում.....</b>	<b>12</b>
<b>ԽԱԶԵՏՐՅԱՆ ԵԿԱՏԵՐԻՆԱ (ԵՊՀ) - Հոգեքանական ներազդման միջոցները սովորական գրականության մեջ (Ֆարխարդյան Աքբարի «Վարք սրբոց» պատճեազործության օրինակով).....</b>	<b>13</b>
<b>ԿԱՐԱԳԵՅՅԱՆ ՆԱՄՐԱ (ԵՊՀ) - Քննադասական ուսալիզմը և հեղինակի ուղղ Թաուֆիկի ալ-Հարխիմի «Գալաքական բննի օրոպրում».....</b>	<b>14</b>

<b>ԿՈՍՏԻԿՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ (ԱԲ) - Արուառ-Ռազմակ իրմ նաշտիլոյի Գումբուղի «Մասակը-և Սովորմէն» դասմական աշխագործումը Արևելյան Հայաստանի XIX դարի քաղաքական իրադարձությունների մասին.....</b>	<b>14</b>
<b>ՀՈՎՀԱԱՆՆԻՍՅԱՆ ԱՆԴՐԵԱՆԻ (ԵՊՀ) - Տրեական համայնքը Եղիսպոտում XX դ. սկզբից մինչև 1960-ական թթ.....</b>	<b>16</b>
<b>ՀՈՎՀԱԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԳՊՄԻ) - Ռույ-Փանճելչնի համաձայնազիրը որովհա խրայելա-դաշտեապիմենան Խարարեարդությունների գարզացման նոր փուլ.....</b>	<b>17</b>
<b>ԳԱՐԻԲՁԱՆԵՑԱՆ ԳԵՎՈՐԳ (ԵՊՀ) - Հայազգի վեզիրները Ֆարիմյան խալիֆայությունում.....</b>	<b>18</b>
<b>ԳԼԵԶՅԱՆ ԳԵԵԼ (ՀՄԻ) - Ֆրանչիական մեծ հեղափոխությունը Պուլաս Ինձիմյանի գնահատմամբ.....</b>	<b>20</b>
<b>ՄԱԼԹՅԱՆ ԱՐՄԱՆ (ՀՄԻ) - Գ.Ա.Օլիվիեի վեղեկությունները ողուահայերի մասին (XVIII դարի վերջին քառորդ).....</b>	<b>21</b>
<b>ՄԱՐՏՈՅԱՆ ԼՈՒՄԻՆԵ (ԵՀԱԿ) - Հաֆեզի առաջն դազայի առանձնահարկությունները.....</b>	<b>22</b>
<b>ՄԱՐՈՒՔՅԱՆ ԱՐՄԵՆ (ՀՅԹԻ) - Թուրքիա-Իրան հակասությունները և Հայաստանը արդի փուլում.....</b>	<b>23</b>
<b>ՄԵԼԻՔՅՅԱՆ ԿԱՐԵՆԵ (ԳԻ) - Հեղրադկեղոնական ժամանակաշրջանի (V դարի II կես - VI դար) դավանաբանական որոշ հարցերի շուրջ.....</b>	<b>23</b>
<b>ՄԵԼՔՈՒՅԵՅԱՆ ՀԱՅՈՄԻԿ (ԳԻ) - Յ.Վ.Գյորեի «Ֆառարի» հայերին քարզմանությունների մի քանի խնդիրների շուրջ.....</b>	<b>24</b>
<b>ՄՈՎՀԱՍԻՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԲ) - Միլիաննիի արքայապոհը՝ Հայկազուն նահատեկությունների և արքաների ցանկում.....</b>	<b>25</b>
<b>ԸԱԳՈՅՅԱՆ ԳԱՅԱՆԵ (ՀԱԲ) - Հայկական Խարսանիքի մի մողական ծեսի ծխառ-առասդեկաբանական ենթապերարի վերականգնման վորձ.....</b>	<b>27</b>
<b>ՋԱՎԱՋՅԱՆ ՎԱՐԴԱՐ (ԱԲ) - <i>Dewrēs e'r'd</i> (Էզրիական «Հողի սուրբը»).....</b>	<b>28</b>
<b>ՂՈՂՈՍՅԱՆ ՆՈՐԱՅՐ (ԵՊՀ) - Հնչյունական գարքերակներից առաջացած վեղանումները Խայերենում.....</b>	<b>29</b>

<b>ՈԱՄԱԳՅԱՆ ՍԱՄՎԵԼ (ԵՊԿ) - Զիոն կերպարը «Քյոողի» էղոսում.....</b>	<b>30</b>
<b>ՈԱՏԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ (ԵՊԿ) - Արարական վոխասոու- թյունները Տորոտքերամի, Շիրակի և Լոռիս հերիարմներում.....</b>	<b>30</b>
<b>ՍԱՌԱԿՅԱՆ ԼՈՒՍԽՆԵ, ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ (ԵՊԿ) - Ժամանակակից բոլորքենի դերքայիների և երանց դասավանդման մի քանի առանձնահապկությունների մասին.....</b>	<b>31</b>
<b>ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՏԱԿ (ԱԲ) - Տրյագի I Արշակունու հեզու կատղած դադմագիպական մի քանի հարցերի շորջ.....</b>	<b>32</b>
<b>ՍԱՖԱՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ, ՄԻՐԱՅՅԱՆ ՌՈՒԲԵՆ (ԵՊԿ) - Աղոքը և զիրքի վոխսկադակվածության մեկանարանությունը Բրն Արարիի «Ֆուառ-ալ-Հիրամ»-ում.....</b>	<b>34</b>
<b>ՎԱՐԳԱՆՅԱՆ ԳՈՎԱՐ (ԵՎԱՀ) - Հր. Աճայշյան՝ Պարսկասպանի կրոնական նոր ուղղությունների ուսումնասիրող.....</b>	<b>35</b>
<b>ՎԻՐԱԲՅԱՆ ԴԱՎԻԹ (ԵՊԿ) - Մուհամեդ Ալիի դերը Եղիղողոսի դապանություն մեջ.....</b>	<b>37</b>
<b>ՏՈՆԻԿՅԱՆ ՍՈՒԵ (ԵՊԿ) - Մուհամադի զիշերային ճանադարիություն դիցարանական վերլուծության հարցի շորջ (ասպիճանի միջով).....</b>	<b>38</b>
<b>ՓԱԾԱՅԱՆ ԱՐԱՐ (ԱԲ) - «Բայամական կոնֆերանս» կազմակերպության դիրքորոշումը դարսաստյան հականարկության վերաբերյալ.....</b>	<b>39</b>
<b>ՕՇԱԵՅՅԱՆ ՄՈՒՐԱԴ - Հայասպանը հին աշխարհի գահակարգում.....</b>	<b>40</b>
<b>ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....</b>	<b>41</b>

Պատվեր 67:

Տպաքանակ 100:

---

Տպագրված է «Դավիթ» ֆիրմայի տպարանում:  
Երևան, Տերյան 72:

